Զորամուտ

Մակերես՝ 729,8հակմ^2

Բնակչություն՝ 296

Տնային տնտեսությունների թիվը՝ 93:
Համայնքի կազմում են ընդգրկված են Զորամուտ (նախկինում ՝ Էվլու) և Գոգավան (նախկինում ՝ Դեմուրչիլար) գյուղերը:
Զորամուտ գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 62 կմ հեռավորության վրա:
Զորամուտ գյուղը հիմնադրվել է 1896 թվականին, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների և Ջավախքից վերաբնակեցվածների կողմից:
Բարձրությունը ծովի մակարդակից 1590 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 594,4 հա, որից՝ 248,8 հա վարելահող,157,7 հա խոտհարք, 155,2 հա արոտ:
Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և դաշտավարությամբ:
Համայնքն ունի դպրոց, մշակույթի տուն,բուժկետ, կապի հանգույց:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:
Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: